



## «Հաստատում եմ»

Համալսարան» ի հմտադրամի  
ու կտորի ԺՊ Ե. Աերորյան

« 10 » փետրվարի 2020թ.

ԿԱՐԾԻՔ

## Առաջատար կազմակերպության

Լիլիթ Ալեքսի Օհանյանի «Ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված է ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

«Ավագ դպրոցի ուսուցիչ մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է արդի ժամանակաշրջանում կրթության զարգացման, որակի և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որը կարող է նպաստել պետության ու տնտեսության, ողջ հասարակության զարգացման ապահովմանը, որտեղ գլխավոր դերակատարություն ունի հանրակրթական դպրոցը:

Ինչպես գիտենք, ՀՀ հանրակրթության ոլորտում վերջին քառա տարիների ընթացքում իրականացվող բարեփոխումներն ուղղակիորեն առնչվում են դպրոցի արդյունավետ կառավարմանը, որը սերտորեն փոխկապված է մարդկային ռեսուրսների կառավարման հետ, որի համատեքստում կարևոր նշանակություն է ստանում ուսուցչի մոտիվացիայի զարգացման հիմնախնդրի ուսումնասիրության հարցը: Այն առավել հրատապ է և արդիական ավագ դպրոցում, որտեղ վերջնականացես ձևավորվում է ավագ դպրոցականի մասնագիտական, աշխատանքային կողմնորոշումը, ի հայտ են գալիս ոչ միայն մոտակա այլև հեռավոր նպատակների առաջադրման և դրանց հասնելու համար ջանքեր գործադրելու ունակությունները: Այս հարցերում մեծ է ավագ դպրոցի ուսուցչի դերը, նրա մասնագիտական գործունեության նշանակությունը, մոտիվացիան, դրա զարգացումը:

Հետազոտվող հիմնախնդրի նպատակադրումը արդիական է, այն վերափոխում է ուսուցչի մասնագիտական գործունեության՝ մասնավորապես նրա մոտիվացիայի զարգացման վերաբերյալ մանկավարժական հանրության պատկերացումները: Աշխատանքի

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, որոշված է հետազոտության նպատակը, վարկածը, առաջադրված են հետազոտության խնդիրները, որոնք բխում են հետազոտության նպատակից: Ներկայացված են նաև հետազոտության մեթոդները, թեմայի մշակվածության աստիճանը, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Ներածության մեջ ներկայացված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները, որոնք տրամաբանորեն կապված են գիտական վարկածի, աշխատանքի տեսական և գործնական նշանակության հետ: Ներածությունում ներկայացված են նաև հետազոտության իրականացման փուլերը, աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Սոտիվացիա հասկացության հայեցակարգային շրջանակը և տեսական հիմքերը» գլուխը կազմված է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են մոտիվացիա հասկացության հայեցակարգային դրույթները, կան ուշագրավ գնահատումներ անձի պահանջմունքների և դրանք ձևավորող գործոնների վերաբերյալ: Առանձնացված են անձնակազմի մոտիվացիայի կառավարման մեթոդները, նյութական մոտիվացիայի ուղիները, հիմնավորվում է աշխատակիցների մոտիվացիայի զարգացման անհրաժեշտությունը մոտիվացնող գործոնների անհատականացումը: Այս գլխում համակարգված կերպով ներկայացված են մոտիվացիայի բովանդակային տեսությունների գործնական կիրառման առանձնահատկությունները դպրոցի կառավարման գործընթացում: Ներկայացված է դրանց առաջացման ժամանակահատվածը, մանրամասնորեն մեկնաբանվում են Ա. Մալորուի, Դ. Մակլելանդի, Տ. Ատքինսոնի, Ֆ. Հերցբերգի, Կ. Ալեքրֆերի պահանջմունքների և մոտիվացիայի տեսությունները, քննարկվում են մոտիվացիայի գործընթացային տեսությունների գործնական կիրառման առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը կրում է «Ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես դպրոցի կառավարման հիմնախնդիր» խորագիրը, նվիրված է դպրոցի կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, որտեղ մանկավարժական հանրույթի մոտիվացումը դիտարկվում է որպես դպրոցի կառավարման գործառույթ: Աշխատանքում քննարկվում են ուսուցչի մասնագիտական և մանկավարժական գործունեության մոտիվացիայի առանձնահատկությունները, մանկավարժական գործունեության բազմամոտիվացվածությունը, անձի մոտիվացիայի և պահանջմունքների միջև փոխկապվածությունը: Ուշագրավ է աշակերտի սովորելու մոտիվացիայի վրա ազդող գործոնների ուսումնասիրությունն ու ներկայացումը, այդ համատեքստում դիտարկելով

ուսուցչի մասնագիտական և մանկավարժական գործունեության առաջընթացը որպես մոտիվացիայի վրա ազդող գործոն:

Երրորդ գլուխը, որը կրում է «ՀՀ ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական և մանկավարժական մոտիվացիայի զարգացման նախադրյալները և պայմանները խորագիրը», իրենից ներկայացնում է կատարված հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծություն, ներկայացվում է նաև ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման կառավարման մողելը, այդ մողելի կիրառման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները, տրվում է «Մանկավարժական մոտիվացիայի զարգացում» դասընթացի նկարագիրը: Հարցման արդյունքները հավաստի են և առնչվում են հիմնախնդրի ուսումնասիրությանը:

Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնք համապատասխանում են առաջադրված խնդիրներին:

Լիիթ Ալբերտի Օհանյանի «Ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» թեմայով ատենախոսությունը կուտ, համապարփակ, գիտամանակավարժական հետազոտական աշխատանք է, որը կարող է նպաստել մանկավարժական գիտության զարգացմանը: Նշենք մի քանի նկատառումներ հետազոտական աշխատանքի վերաբերյալ.

1. Աշխատանքում կարելի էր անդրադառնալ ավագ դպրոցի հիմնախնդիրներին, կայացման պայմանների բարելավմանը, այդ համատեքստում քննարկելով ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման անհրաժեշտությունը:
2. Կարելի էր հարցումներ անցկացնել ավագ դպրոցների տնօրենների, տնօրենների տեղակալների հետ, նրանց կողմից իրականացվող կառավարման գործառույթների տեսանկյունից հիմնախնդրի վերաբերյալ պարզաբանումներ և վերլուծություններ ստանալու նպատակով:
3. Ներածության մեջ ներկայացված է աշխատանքի կառուցվածքը, որտեղ կարելի էր նշել աշխատանքում օգտագործված աղյուսակների, գծապատկերների քանակը:

Նշված նկատառումները չեն ստվերում կատարված գիտական հետազոտական աշխատանքը, այն արժեքավոր է մանկավարժական գիտության, ավագ դպրոցի արդյունավետ կառավարման, ուսուցչի մասնագիտական և աշխատանքային մոտիվացիայի զարգացման տեսանկյունից:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Ալբերտի Օհանյանի «Ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը բննարկվել և ընդունվել է 2020 թվականի 10 փետրվարի մանկավարժության ամբիոնի թիվ 8 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ս. Մկոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Աղամյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Միքաելյանը, Ա. Յայլոյանը, Ն. Գրիգորյանը, Շ. Ալեքսանյանը, բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուկյանը, Լ. Բաղրամյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ

Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը  
հաստատում եմ:

ՇՈՀ-ի գիտքարտուղար

Վ. Պետրոսյան

